Ի ՓԱՌՍ ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Այն հեռավոր 301 թվականից, երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, զորակցությամբ Տրդատ Մեծ արքայի, քրիստոնեական հավատքը հաստատեց Հայոց աշխարհում որպես պետական ու մշտնջենական կրոն, արդեն 1700 տարի իր ամենահաղթ խաչը բարձր է պարզել հայոց առաքելավեր Եկեղեցին, քանզի այդ մեծ ու հզոր կառույցի հիմքերն էին դրել Տիրոջ կողմից Արևելք ու Հայոց աշխարհ առաքված Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, Հիսուսի աշակերտներն ու սրանց աշակերտները: Եվ մեր սուրբ Եկեղեցին առաքելաշավիղ դարձավ, քանզի հենց Տիրոջ կենդանության ժամանակներից ընթացավ այդ ուղիով: Եվ մեր հավատքի հաստատուն վեմը դարձավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի աննման տեսիլքով ձև ու մարմին առած Սուրբ Էջմիածնի տաճարը: Այնուհետև տեսիլք երևաց արքային, և Աստուծո հրեշտակն ասում էր. «Պետք է, որ դուք առանց հապաղելու Գրիգորին քահանայապետության պաշտոնը տաք, որպեսզի մկրտությամբ լուսավորի ձեզ»: Տեսիլքը երևաց սրբին, ու հրեշտակն ասում էր. «Քրիստոսից է այդ հրամայված քեզ»:

Ուրեմն հայոց մեր առաջին եպիսկոպոսապետը առաջին հերթին Աստվածընտիր էր և նոր միայն՝ Ազգընտիր: Իսկ վերջինս, որ ասվում է մինչև այսօր Հայոց Հայրապետների համար, գեղեցիկ արտահայտություն չէ, այլ այն իրողությունն է, որ մեծ մասամբ, ավելի կամ պակաս չափով կատարվել է նրանց ընտրության ժամանակ, և Հայոց Եկեղեցին ու ազգը մշտապես, եթե չար ժամանակներն ու հանգամանքները խանգարիչ չեն եղել, հավատարիմ են մնացել այս ավանդական կարգին: Ճիշտ է, թեև Սուրբ Լուսավորչից հետո մի որոշ շրջան կաթողիկոսությունը դարձավ ժառանգական նրա տոհմի համար, սակայն արքաները նոր Հովվապետ կարգելիս անպայման ստանում էին թե՛ հոգևոր դասի և թե՛ նշանավոր աշխարհականների համաձայնությունը, խորհրդակցում նրանց հետ:

Իսկ երբ թշնամիներին հաջողվեց վերացնել թագավորական իշխանությունը մեր երկրից, և պատմության ասպարեզից դուրս մղվեցին Արշակունիները, բարձրաստիճան հոգևորականներն ու ազնվական դասն ստեղծեցին համատեղ խորհուրդներ, որպեսզի միասնաբար քննարկեն ու լուծեն ազգային-եկեղեցական կարևորագույն հարցերը:

444 թվականին եղավ Շահապիվանի ժողովը, որն իրավամբ ազգային-եկեղեցական էր, և նրան մասնակցում էին ոչ միայն հոգևորականները,

այլև նախարարներն ու զորականները: Իսկ ժողովը հավաքվել էր մի շատ կարևոր խնդրով՝ սահմանելու Հայոց աշխարհում օգտագործվելիք եկեղեցական կանոնները: Այն դժվարին ժամանակներում, երբ վերացել էր Արշակունյաց գահատոհմը, հոգևոր ու աշխարհիկ իշխանության միասնության մի փայլուն վկայություն էր սա: Այս ժողովն էր, որ օրինակ ծառայեց 449-ի Արտաշատի ժողովին, որը գումարվեց շատ տագնապալի առիթով՝ պատասխան տալու պարսից արքունիքին՝ կրոնափոխության առթիվ սրա հրամանին: Եվ ըստ ոսկեշուրթ Եղիշեի՝ նրան մասնակցում էին բոլոր եպիսկոպոսները, բազմաթիվ քորեպիսկոպոսներ, պատվական երեցներ, մեծամեծ նախարարներ: Ու նաև այս ժողովում էր, որ ներկաները մեծ բազմության ներկայությամբ ու հավանությամբ հավաստեցին ու հայտարարեցին իրենց բացառիկ նվիրվածությունը քրիստոնեական հավատքին ու հայրենի երկրին. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված»:

Եվ դա հաստատեցին ոչ միայն գրչով, այլև երկու տարի անց Ավարայրում իրենց սուրբ արյունով:

Դարերի հոլովույթի մեջ նվիրական ու անսասան էր մնում Կաթողիկոսական Աթոռը, որքան էլ պատմական տարուբերումներ լինեին ու չար հողմեր փչեին: Եվ այդ Աթոռն էր գլխավորելու հայոց քրիստոնեությունը, և այդ քրիստոնեությունն էր պահելու ազգ ու հայրենիք, լեզու և մշակույթ, ազատասիրական ձգտումներն ու պետականության հույս-երազանքը: Իսկ Ազգային-Եկեղեցական Ժողովները շարունակվում էին գումարվել: Տեղի էին ունենում նաև արաբական տիրապետության շրջանում: Եվ եթե հարկ էր լինում՝ ընդդիմանում էին օտար բռնակալների ու կառավարիչների կամքին: Այդպես եղավ 840 թ., երբ արաբական կառավարիչը Հովհաննես Դ Ոլայեցուն զրկեց Հայրապետական Աթոռից: Իշխանաց և եպիսկոպոսաց ժողովը նրան վերահաստատեց իր գահին:

Բագրատունի թագավորներն սկզբնական շրջանում իրենք էին նշանակում Հայրապետին՝ իհարկե խորհրդակցելով շրջապատի հետ, սակայն ահա Մաշտոց Եղիվարդեցուն արդեն ժողովն ընտրեց կաթողիկոս: Ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, «թագավորը, ավագ իշխանները և անվանի ազատները նրան նստեցրին Լուսավորչի Աթոռին»: Իսկ երբ նա յոթ ամիս անց վախճանվեց, կրկին հավաքվեցին նախարարները և թագավորի հետ միասին ընտրեցին Դրասխանակերտցուն: Եվ բնավ էլ պատահական չէ, որ Դրասխանակերտցին հատուկ շեշտել է նախարարների ներկայությունը: Դա արել է միտումնավոր, որպեսզի ցույց տա, թե նրանք եթե կաթողիկոս են ընտրում, ուրեմն պարտ են մտահոգ լինել Եկեղեցու պայծառության համար: Եվ դա կարող է լինել միայն ու միայն ազգային միաբանությամբ՝ մի կողմ դնելով անձնական հաշիվներն ու քեն-վեճերը:

Հետագայում այդպիսի ժողովներ սկսեցին գումարվել և կիլիկյան Հայաստանում: Այսպես, եպիսկոպոսների և իշխանների համատեղ խորհրդում կաթողիկոս ընտրվեց Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221—1267): Այդ տեղի ունեցավ 1220 թ. և փաստորեն վերահաստատումն էր կաթողիկոսի ընտրության ավանդական կարգի: Եվ հենց այս Հայրապետին էր վիճակված կոչվելու Ամենայն Հայոց Կաթողիկոս:

484 թ. Կաթողիկոսական Աթոռը Վաղարշապատից փոխադրվել էր Դվին, ապա աստանդական դարձել, մինչև հաստատվել էր Կիլիկիայում: Իսկ երբ վերացավ պետականությունը կիլիկյան հողում, արդեն անհրաժեշտություն դարձավ այն կրկին Վաղարշապատում՝ Սուրբ Էջմիածնում հաստատելը: Եվ ահա եկավ ցանկալի ու բաղձալի օրը: Դա 1441 թվականն էր, երբ կրկին կաթողիկոսական կենտրոն էր դառնում Սուրբ Էջմիածինը: Ցնծագին գալիս էին Հայաստան աշխարհի բոլոր կողմերից՝ ներկա լինելու այդ մեծ տոնին, քանզի ժամանակի լուսամիտ այրերը դրա մեջ էին տեսնում ազգը միավորելու մի կարևոր ազդակ: Բանասեր Կարապետ Կոստանյանն այդ մասին այսպես է գրում. «Վաղարշապատ դիմող կրոնավորներն երևցնում են իրենց գիտակցական ձգտումը Հայոց Մայր Եկեղեցու դարավոր սուգը փարատել, որովհետև նրա մեջ էին մարմնացած ամբողջ ազգի գոյության և նորոգության գաղափարը»: Իսկ Թովմա Մեծոփեցին Սուրբ Էջմիածնի համար կասի. «Քրիստոսադիր Աթոռն մեր հայրենի»:

Եվ ահա այդ ժողովից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձավ Կիրակոս Ա. Վիրապեցին: Ժողովը եղել է խիստ բազմամարդ, և առաջին անգամ վկայություն ենք գտնում, թե մասնակցել են նաև կանայք: Հետաքրքրքրական փաստ է և վկայում է մեր Եկեղեցու լայնախոհության մասին: Եղել են դեպքեր, երբ Եկեղեցու պայծառացմանը նպաստելու բարի նպատակով աշխարհիկ անձինք են նախաձեռնել կաթողիկոսի ընտրությանը: Այդպես եղավ 1628-ին, երբ ընտրվեց Մովսես Տաթևացին: Նա էլ վերականգնեց վանական կյանքը և զարկ տվեց լուսավորությանը: Իսկ նրան եթե չընտրեցին այլ վայրերից եկած պատվիրակները, ապա դա կատարվեց բոլոր գաղթօջախներից ստացված պատասխան համաձայնական նամակների միջոցով: Իսկ սա նշանակում է, որ կաթողիկոսական ընտրություններին ստեղծված պայմաններում մասնակցում էին համարյա բոլոր գաղթօջախները: Իսկ ընտրությունը Մայր Աթոռում կատարվեց հոգևորականների և աշխարհականների մեծ բազմության ներկայությամբ: Այդ կերպ ընտրվեց նաև նրան հաջորդած Փիլիպոս Կաթողիկոսը:

18-րդ դարում կաթողիկոսական ընտրության նախաձեռնությունը պատկանում էր Սպահանի մեծատուններին, 19-րդ դարում այդ դերն անցավ Կոստանդնուպոլսին, որի Պատրիարքարանի և մեծամեծների համաձայնությունը պարտադիր էր: Սակայն շուտով այս սուրբ գործն ընկավ քաղաքական ոլորտ, ուր բախվում էին պարսիկների, թուրքերի, իսկ 1800 թվականից արդեն՝ ռուսական արքունիքի շահերը:

Ռուսական կառավարության 1836 թ. նախաձեռնած «Պոլոժենիայի» (կանոնադրության) ընդունման, նպատակն էր որոշակի դարձնել հարաբերությունները ռուսական կառավարության և Հայոց Եկեղեցու միջև: Իհարկե տիրողները շատ հաճախ էին ստիպված լինում հաշվի նստել նաև ժողովրդի միասնական կամքի հետ:

«Պոլոժենիան» գործեց փաստորեն մինչև 1911 թվականը, երբ կատարվեց վերջին ընտրությունը, հետո նոր կանոնադրություններ մշակվեցին, որոնք գործում են առ այսօր: Իսկ որ այսօր հասունացած խնդիր է եկեղեցական նոր սահմանադրություն ունենալը, դա փաստ է: Իսկ որ դա պիտի ընդունի և հաստատի Ազգային-Եկեղեցական Ժողովը, դա էլ քննարկման ենթակա չէ: Դա պիտի ընդունի երկու տարի անց գումարվելիք ժողովը:

Սոցա ապացիսից է եղել այն ժողովի ացցած դարավոր ճանապարհը, որն ապաց կոչվում է Ազգային-Եկեղեցական։ Եվ պատահական չէ, որ ազգային շինարարությունը հանդիսանում է առաջինը։ Չէ՞ որ այն իր ճանապարհներով ավելի՝ հանդգնային է և ճանապարհ է ոչ միայն եկեղեցական զանազան խնդիրների ճշտումը, նոր որոշումների ընդունումը, այլև առաջին հերթին՝ ազգի միավորումն ու միասնականացությունը ապահովումը նոր պայմանների՝ մերձակա և հեռավոր գաղթօջախների առկայության պայմաններում։

Միշտ էլ մեր սուրբ Եկեղեցին է կատարել այդ ազգամիավորիչ դերը։ Մեծ վիպասան Ռաֆֆին իր «Կայծեր» վեպում, Վասպուրականի Ցիրանոր վանքի ուխտագնացության առիթով, վշտանալով հայոց բաժան-բաժան ճակատագրի համար, գրել է, «Բայց մի կապ, որ դեռ պահպանվել էր, մի կապ, որ միավորում էր այն խորտակված ամբողջության զանազան կողմանները, մի կապ, որից չէր կարողացել խլել բռնակալի սուրը, դա էր՝ կրոնքը և Եկեղեցին»։

Եվ ահա այժմ էլ հենց Եկեղեցին է միավորիչը հայության տարբեր հատվածների, իր սրբազնագույն Ազգային-Եկեղեցական ժողովով։ Այդ մասին որքան լավ է ասել Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը Գևորգ Ջ Հայրապետի ընտրության առիթով գումարված ժողովի մասին (1945 թ.), «Այս ակնհայտորեն, ամենքի համար տեսանելի և հասկանալի արտաքին ապացույցն էր, թե հայ ժողովրդի համար որքան մոտ է Հայաստանյայց Եկեղեցին յուր Մայր Աթոռով և Ամենայն Հայոց Հայրապետությամբ, որ իրոք մագնիսական ուժ իրար է բերել այդպիսի հոծ թվով ներկայացուցչություն աշխարհի ամեն անկյուններից, ուր հայություն կա խմբված»։

Այդպիսին էր և այն ժողովը, որը գումարվեց սույն թվականի ապրիլի 8-ին Հայոց հոր Հայրապետի ընտրության բարեբաստիկ առիթով։ Այն կմնա թե՛ Եկեղեցու և թե՛ ընդհանրապես ժողովրդի պատմության մեջ իրոք հայոց պետականության անկախության պայմաններում գումարված ժողով, որն այնքան բարդ ու դժվարին օրերում պիտի տար շատ հարցերի պատասխանը, որոնցից գերագույնը Լուսավորչի գահի 131-րդ գահակալի ընտրությունն էր։ Ընտրությունը մի գահակալի, որի ուսերին պիտի ընկներ Հայ Եկեղեցին բարեկարգելը և բարեզարդելը, այս դժվարին ժամանակներում ազգը ավելի միավորելը և նրա բոլոր հատվածների ջանքերը Մայր Հայրենիքի բարեշինությանը ծառայեցնելը և շատ ու շատ այլ հոգսեր։ Եվ ահա այդ գիտակցությամբ էր, որ հորքնոտիր և ազգընտիր Կաթողիկոս Գարեգին Ա-ն առաջինն ասացնեց իր հավատացյալ հոտի հովվությունը՝ կաթողիկոսական գահակալության առթիվ իր քարոզում ասելով, «Տասնութ տարիներ կաթողիկոսության այդ լուծը կրեցի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահին վրա և այժմ ավելի բարձր պատասխանատվությամբ զայն պիտի կրեմ Լուսավորչակառույց այս սրբազնագույն գահին վրա, Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռին ի Ս. Էջմիածին»։

Այո, ծանր, շատ ծանր բեռ ընկավ հորքնոտիր Վեհափառի ուսերին։ Սակայն ճա՛ սովոր է դրան, 1949 թվականից ի վեր լինելով հոգևոր զանազան պաշտոններում և ունենալով հոգևոր զանազան աստիճաններ, ճա՛ ապացուցել է իր բացառիկ ճկիրվածությունը Եկեղեցուն ու Ազգին։ Իսկ 18 տարի լինելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, զարկ տվեց ազգային-կրոնական, մշակութային-շինարարական աշխատանքներին։ Այժմ մեր ընդհանրական Եկեղեցուն հենց այդպիսի անխոնջ ու ճկիրյալ Վեհ է հարկա-

վոր, որը կամոքն Աստուծո քնարվեց: Այժմ Մայր Աթոռը պետք է ծավալի և՛ շինարարական-կառուցողական, և թե՛ ազգային-մշակութային աշխատանքներ: Չմոռանանք ու լավ հիշենք, որ նրա կաթողիկոսության տարիների հրատարակվել են 350 հատոր կազմող պատմա-բանասիրական, կրոնական, աստվածաբանական խիստ շահեկան աշխատություններ:

Դարեր շարունակ Եկեղեցին է հովանավորել, նրա ներսում են գործացել հայկական դպրությունը, գրատպությունը, աստվածաբանական ու հայրաբանական, հայագիտական միտքը: Սակայն վերջին տասնամյակների մեղքով, նաև վերջին տարիների աննկրեկի հալածման պատճառով Մայր Աթոռն, ավաղ, կորցրել էր առաջին նկրթին իրեն վերապահված այդ դերը: Եվ այժմ արդեն հրամայական անհրաժեշտություն է վերականգնել այդ դերը և վերադառնալով հրատարակչական ավանդներին՝ լույս ընծայել մեր Եկեղեցու դավանաբանությունից բխող գործերի միջնադարյան աստվածաբանական բնագրերը՝ զուգահեռաբար աշխարհաբարի վերածած: Պարզ է, որ անհրաժեշտ է այդ գործերը ներկա ընթերցողին մատուցել դյուրընկալելի ձևով, ինչպես նաև, հաշվի առնելով այսօրվա հրատարակչական ոչ դյուրին պայմանները, նպաստել հայագիտության զարգացմանը, որը միշտ էլ մեր սուրբ Եկեղեցու առաջնահերթ խնդիրներից է եղել, հրատարակելով այն ուսումնասիրությունները ու աշխատությունները, որոնք հարաբերվում են եկեղեցական պատմությանն ու մշակույթին: Ինքը Վեհափառը բեղուն գրչի տեր է և հեղինակ գրական-աստվածաբանական բազմաթիվ գրքերի ու հոդվածների, որոնք լույս են տեսել և այլ լեզուներով:

2001 թվականը շատ կարևոր թվական է դառնալու մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքում: Մայիսի 5-ի Ազգային-Եկեղեցական Ժողովի չորրորդ նիստում Վեհափառ Հայրապետն իր խոսքում ասաց, թե մեր առաջին նպատակը պետք է լինի Հայաստանում որպես պետական կրոն քրիստոնեության հաստատման 1700-ամյակին նախապատրաստվելը: Ի շարունակություն այդ մտքի ասվեց. «Շատ Եկեղեցիներ ու կազմակերպություններ այսօր՝ 2000-ամյակի ավարտին և 3000-ամյակի շեմին, տեսապես մտածում են, թե ինչպես թարմացնեն, բարոյապես առողջացնեն իրենց ներքին կյանքը, մենք նույնպես պարտավորություն ունենք ամենայն լըրջությամբ զբաղվելու այդ աշխատանքներով»:

Իսկ անելիքները շատ ու շատ են և ծառացած խնդիրները՝ բազմաթիվ: Այո, մեծ կարևորություն է ստացել այսօր հոգևոր կյանքի բարեկարգումը: Սակայն ոչ այնպես, ինչպես հրամցնում են որոշ նորահայտ «բարենորոգիչ տեսաբաններ», այդ պատկերացնելով լյութերական ռեֆորմացիայի ձևով, այլ բարենորոգել՝ անխաթար պահելով Հայ Եկեղեցու դավանաբանությունը, ձևավորված ներքին առաքելական կարգը և ծիսական-արարողական համակարգը, ժողովրդին մատչելի ու հասկանալի ձևով ներկայացնել համաքրիստոնեական և մեր երջանկահիշատակ հայրերի հոգևոր ժառանգությունը, ինչպես ժամանակի պահանջներին համեմատ այդ կատարեցին Ներսես Շնորհալին և Գրիգոր Տաթևացին, իսկ նոր ժամանակներում պահանջում էին կատարել Գարեգին Հովսեփյանն ու Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն իրենց ոգեշունչ ու ազգանվեր քարոզներով:

Անա թե երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանը դեռևս 1908 թվականին Մատթեոս Բ Կաթողիկոսի քնարության շրջանում ինչ էր գրում. «Հայոց վերածնության խարիսխը քրիստոնեական ավետարանական վերակենդանությունն է, մեր դարավոր և սրբազան ժառանգության բարե-

փոխությունն ու բարեկարգությունը, որովհետև առանց բարոյական վերածնության ամենայն մի շարժում հաստատված է ավազի վրա»: Իսկ սա թելադրում է առաջին հերթին անխաթար ու անաղարտ պահել մեր հավատը ոտնձգություններից, որ ցանկանում են կատարել զանազան աղանդներ: Ահա թե ինչու մեր նորընտիր Հայրապետը այդ նույն ժողովում, խոսելով այս հարցի մասին, ասաց, թե մեր Եկեղեցին պիտի վերստին այնքան կենսունակություն կտանա, որ չթույլատրի օտար քարոզիչներին գալ այստեղ ու լցնել մեր հոգևոր դատարկությունը: Պետք չէ այս առիթով մեղադրել որևէ մեկին, այլ լծվել աշխատանքի:

Իսկ այդ հարցում ամենակարևոր աշխատանքը նոր սերնդի հոգևորականության պատրաստության հարցն է: Ըստ նրա՝ այստեղ մեծ դեր ունի հոգևոր ճեմարանը, որը սիրտն է մեր Եկեղեցու հոգևոր հաստատությունների, և նրան պետք է վերադարձնել Գևորգյան ճեմարանի փառքը:

Եվ շատ կարևոր է, որ Վեհափառը շեշտը դնում է հոգևորական նոր սերունդ դաստիարակելու վրա, չէ՞ որ այսօր փաստ է, որ եկեղեցական համակարգում խիստ նվազել է քահանաների դերը, և նրանք, որքան էլ ցավալի է, վերածվել են ծիսակատարություններ անողների: Եվ որ քահանաները հին օրերի օրինակով կրկին պետք է վերածվեն քարոզիչների, դա կասկածից դուրս է: Հենց դա է Եկեղեցու այսօրվա ճգնաժամից դուրս գալու կարևոր խնդիրներից մեկը: Իսկ այդպիսի իսկական քարոզիչ-քահանաներ պետք է կրթի ու դաստիարակի և պատրաստի հոգևոր ճեմարանը: Կարևոր է և ծխական համայնքների վերականգնումը: Քանի որ դրանց բացակայության պատճառով է, որ կենդանի կապ չկա ժողովրդի և քահանաների միջև: Ահա թե ինչու որևէ ծիսական արարողություն կատարելու համար հավատացյալները չգիտեն, թե ում դիմեն: Նաև սա է պատճառը, որ որևէ հարցի պարզաբանման կամ ընդհանրապես այսօր ծագած հոգևոր ծարավը հագեցնելու համար նրանք ստիպված դիմում են օտարամուտ քարոզիչներին, որոնք յուրաքանչյուր շրջանում բացված ժողովարանների միջոցով ստեղծել են կազմակերպված ներքին ցանց, որի միջոցով էլ այժմ փաստորեն զբաղված են հոգեորությամբ:

Այո, Հայ Եկեղեցին և ազգը եղել են միասնական, և այժմ ավելի պետք է ամրանա այդ միությունը, իսկ դրան այնքա՜ն կարևոր դեր է վերապահում Վեհափառ Հայրապետը: Դրան պետք է նպաստի և «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը: Ահա թե ինչու է մեր նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսն այնպես եռանդագին կոչ անում զորավիգ կանգնել նրան: Չէ որ նաև հիմնականում այս կերպ կարելի է ավելի ամրացնել Հայրենիք-Սփյուռք կապերը և դրանք նպատակամղել հայրենիքի վերաշինության ու զորեղացման նվիրական գործին:

Մեր Եկեղեցու նորընտիր Հայրապետը լայն ճանաչում ու հարգանք ունի համաշխարհային հոգևորականության շրջանում: Նա Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի պատվավոր նախագահն է, և հավատացյալ հոտը լիահույս է, որ այսուհետ առավել ևս կբարձրացնի Հայ Եկեղեցու հեղինակությունը միջազգային ասպարեզում, և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ըստ արժանվույն կներկայացնի մեր Եկեղեցին և ամենայն կերպ կնպաստի քույր Եկեղեցիների է՛լ ավելի մերձեցմանը, անխաթար պահպանելով Հայ Եկեղեցու պատմականորեն ձևավորված հոգևոր ինքնությունը:

Հարկ է վերանորոգել նաև նախկին Խորհրդային Միության տարածքում գոյություն ունեցող այժմյան թեմական բաժանումը և այն հարմարեցնել այսօրվա հոգևոր-քաղաքական-մշակութային պահանջներին: Հաշվի առնելով այն իրողությունը, որ մեր Եկեղեցու թեմական առաջնորդները հանրապետությունների ղեկավարների կողմից միշտ էլ ընդունվել ու դիտվել են որպես տեղի հայկական համայնքների առաջնորդներ ու ներայացուցիչներ, անհրաժեշտ է թեմական նոր բաժանում կատարել նախկին ԽՍՀՄ տարածքում և հարկ է, որ ընտրվեն այնպիսի թեմական առաջնորդներ, որոնք հոգևոր բարձր իմացականության հետ միասին կարողանան ըստ արժանվույն ներկայացնել իշխանությունների առջև հայ համայնքը և ի վիճակի լինեն լուծել ծագող բազմաթիվ հարցերն ու խնդիրները:

Կաթողիկոսական գահակալության առթիվ իր քարոզում Վեհափառ Հայրապետն ասաց. «Հայաստանյայց Եկեղեցին պիտի կատարի իր ազգային դերը, որովհետև ան անքակտելիորեն շաղախված է ողջ հայոց պատմության և ճակատագրի հետ:

Այդ նույն հասկացողությամբ է, որ մեր Եկեղեցին պիտի շարունակի զորավիգ կանգնիլ Արցախի մեր հարազատ եղբայրներուն ու քույրերուն, անոնց հերոսական մաքառումին մեջ, ի պաշտպանություն անոնց արդար իրավունքներու»:

Եվ ի հաստատումն այս խոսքերի՝ Վեհափառ Հայրապետը քիչ օրեր անց կատարեց իր հովվական առաջին այցելությունը Արցախի հավատացյալ հոտին՝ նրանց սրտերը լցնելով հպարտության, հավատի և երախտագիտության զգացումներով:

Մայր Հայրենիքի և Սփյուռքի հարաբերությունների պատմության մեջ գրվեց մի նոր փայլուն էջ և դա ապրիլի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրական ու դարավոր կամարների տակ գումարված Ազգային-Եկեղեցական սրբագումար Ժողովն էր, որը դուրս գալով եկեղեցական բնույթից՝ վերածվեց ազգային-հայրենասիրական մի խանդավառ տոնակատարության, քանզի Լուսավորչի գահին բարձրացրեց 131-րդ արժանավոր Գահակալին ու Հային՝ նրան ավանդելով պատմական մի հրամայագիր՝ բարեզարդել, պայծառացնել ու պանծացնել Հայ Եկեղեցին ի փառս Հավատի ու Հայրենյաց...

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ